

ЗАО
"ГОСУДАРСТВЕННАЯ
ВНЕВЕДОМСТВЕННАЯ
ЭКСПЕРТИЗА ПРОЕКТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"

«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ
ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԲԸ

"THE STATE NON
DEPARTMENTAL EXPERT
COMMISSION FOR
CONSTRUCTION DESIGNS
OF REPUBLIC OF
ARMENIA " CJSC

0078 Ереван, Комитаса 54б

0078 Երևան, Կոմիտաս 54բ

St. Komitas 54b, Yerevan

08.10.2025թ. № Քնն. 493

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղար՝
տիկին Հ.Հակոբյանին

«Ռեստաուտ-1» ՍՊ ընկերության տնօրեն
պարոն Ա.Ստեփանյանին

Դիտարկելով ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սք. Սիոն եկեղեցու (պետ. ցուցիչ 9.35.14.1) որմնանկարների ամրակայման և վերականգնման նախագծային փաստաթղթերը՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունը երաշխավորում է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Որմնանկարների ամրակայման և վերականգնման ամփոփ նախահաշվային արժեքը կազմում է 25.700,1 հազ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Արդիր՝ փորձաքննության եզրակացությունը 2 օրինակից, յուրաքանչյուրը 6 թերթ:

Հարգանքով՝
գործադիր տնօրեն



Գ. ԱՐՇԱԿՅԱՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ**

(Պետական լիցենզիա ՔՊԼ-000563, 1-ին դաս, ՔՊԼ-000563-03)

Հաստատում եմ՝

«ՀՀ նախագծերի պետական
արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն



Գ. Արշակյան
10 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցու (պետ. ցուցիչ 9.35.14.1) որմնանկարների ամրակայման և վերականգնման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ

Պատվիրատու

ՀՀ Կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն

Կատարող

«Ռեստաուտ-1» ՍՊ ընկերություն

Նախագծման համար հիմք են հանդիսացել.

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Ռեստաուտ-1» ՍՊ ընկերության միջև 26.02.2025թ. կնքված N ՀՀԿԳՄՍՆ ԳՀԾՁԲ-25/14 ծածկագրով պետական գնման պայմանագիրը
- Պատվիրատուի նախագծման առաջադրանքը՝ N ՀՀԿԳՄՍՆ ԳՀԾՁԲ-25/14 ծածկագրով պետական գնման պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիրը,
- Պատվիրատուի նախագծման առաջադրանքը:

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցու (պետ. ցուցիչ 9.35.14.1) որմնանկարների ամրակայման և վերականգնման նախագծային փաստաթղթերի փաթեթը, որում

ամփոփված է XVII դարի մոնումենտալ գեղանկարչության ամրակայման, վերականգնման և ցուցադրական տեսքի բերելու մեթոդաբանությունը:

Նախագծով նախատեսված է հանրապետական նշանակության մշակութային ժառանգության օբյեկտ հանդիսացող Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցու մոնումենտալ գեղանկարչության վերականգնման աշխատանքների իրականացման գիտանախագծային փաստաթղթերի (մեթոդաբանություն) մշակում:

Նախագծային փաստաթղթերն ամփոփված են մեկ գրքում:

Այն ներառում է ներածական մաս, հուշարձանի մասին համառոտ պատմական տեղեկագիր՝ կից հավելվածով, մատենագրություն, պատկերների ալբոմ, որմնանկարների տեխնիկական վիճակի նկարագրություն (ենթաբաժինն ուղեկցվում է ֆոտոլուսանկարներով և սխեմատիկ քարտեզներով), 2025 թվականին իրականացված ֆիզիկական-քիմիական և սնկաբանական լաբորատոր հետազոտությունների արդյունքներ, նկարների մաքրման և ամրակայման փորձնական վերականգնողական միջոցառումների մասին հաշվետվություն:

Հաջորդիվ ներկայացված է Սբ. Սիոն եկեղեցու մոնումենտալ գեղանկարչության վերականգնման և ցուցադրական տեսքի բերելու մեթոդաբանության մանրամասների շարադրանքը և եզրակացությունը՝ գեղանկարչության պահպանմանն ուղղված տեխնոլոգիական և մեթոդական հանձնարարականներով:

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցու որմնանկարների ամրակայման և վերականգնման նախագծային փաստաթղթերը ներկայացված են որպես XVII դարի մոնումենտալ գեղանկարչության նմուշի ամրակայման, վերականգնման և ցուցադրական տեսքի բերելու մեթոդաբանություն:

Ներկայացված նախագծը բովանդակում է արխիվային նյութերի վերլուծությունը, սվաղի շերտի, հիմնաներկի և ներկի ֆիզիկաքիմիական լաբորատուր ուսումնասիրությունները և տեղում կատարված փորձնական աշխատանքները, որոնց արդյունքում ընտրվել են համապատասխան նյութերը և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն մշակվել են վերականգնման մեթոդները:

Ուսումնասիրելով նախագծային փաստաթղթերի կազմն ու բովանդակությունը, պետք է եզրակացնել, որ այն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված կարգին:

Նախնական ուսումնասիրությունները կատարվել են լիարժեք, ինչի արդյունքում ստացվել է անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն որմնանկարների պատկերագրության, տեխնիկական վիճակի և ֆիզիկաքիմիական հատկանիշների վերաբերյալ:

Փորձնական աշխատանքները կատարվել են համաձայն ռեստավրացիայի կանոնների: Փորձարկված նյութերը և մեթոդները տրամաբանական են հուշարձանի

վերականգնման համար: Օգտագործված նյութերը համապատասխանում են որմնանկարների վերականգնման արդի պահանջներին:

Նախագիծը պարունակում է հետագա աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գրաֆիկական և տեքստային նյութեր:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված մեթոդաբանությունը համապատասխանում է ռեստավրացիայի նորմերին և կանոններին:

Ապահովում է պատմամշակութային հուշարձանի պահպանումը պատշաճ տեխնիկական վիճակում՝ առանց դրա ֆիզիկական վիճակը վատթարացնելու կամ բնույթը փոխելու: Համապատասխանում է ՀՀ գործող օրենսդրության դրույթներին, մշակութային ժառանգության օբյեկտների պահպանության, պահպանման և օգտագործման բնագավառում գործող մեթոդական և կարգավորող փաստաթղթերի պահանջներին:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սր. Սիոնեկեղեցու որմնանկարների ամրակայման և վերականգնման աշխատանքների նախագծային փաստաթղթերը քննարկվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մոնումենտալ հուշարձանների հարցերով աշխատանքային խմբի 2025թ. հուլիսի 30-ին կայացած նիստում և տրվել է դրական եզրակացություն:

• Նախահաշվային մաս

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սր. Սիոնեկեղեցու որմնանկարների ամրակայման և վերականգնման աշխատանքների փորձաքննության ներկայացրած նախահաշվային արժեքը կազմել է 25.015,84 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ներկայացված նախահաշվարկը կատարված է հիմք ընդունելով 1984թ. նորմերը՝ վերահաշվարկված 2025թ. գներով, կիրառելով՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված կողմնորոշիչ գները և ինդեքսները.

- աշխատավարձի մասով անցումային ինդեքսն ընդունված է 2478.61,
- մեքենաների շահագումման ինդեքսը՝ 3018.17:

Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 268.309 ՀՀ դրամ:

Նյութերի արժեքները հաշվարկված են ՀՀ ֆինանսների նախարարության 2025թ. N06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով և 2025թ. շուկայական արժեքներով՝ կիրառելով 5% այլ ծախսեր, 7,61% տրանսպորտային ծախսեր, 2% պահեստավորման ծախսեր:

Նախահաշվում հաշվի են առնված հետևյալ ծախսերը.

- վերադիր ծախսեր՝ 13.3%,
- շահույթ՝ 11%,
- ժամանակավոր շենքերի և շինությունների ծախսեր՝ 0.50%,
- կլիմայական պայմանների ազդեցության ծախսեր՝ 0.40%,

- շինաղբի տեղափոխման ծախսեր՝ 0.15%,
- փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքներ՝ 2.0%,
- տեխնիկական հսկողության ծախսեր՝ 2.0%,
- հեղինակային հսկողության ծախսեր՝ 4.0%,
- չնախատեսված ծախսերը՝ 3.0%,
- ԱԱՀ՝ 20%:

Նախահաշվի ծավալներն ընդունված են նախագծային և տեղում կատարված չափագրական տվյալների հիման վրա:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված փաստաթղթերը՝ նշվում է.

- Շատիվանքի Սբ. Սիոնեկեղեցու որմնանկարների ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված մեթոդաբանության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

• Նախահաշվային մասի վերաբերյալ՝

Ուսումնասիրելով ներկայացված նախահաշիվները՝ առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Բացատրագիր

Բացատրագրում պետք է լրացնել՝

- օբյեկտի անվանումը,
- որ օրենսդրական ակտով սահմանված կարգի համաձայն է կատարվել հաշվարկները՝ անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2024թ. հոկտեմբերի 17-ի №1656-Ն որոշմամբ հաստատված «Շինարարական աշխատանքների գնագոյացման նախահաշվային նորմերի ու դրանց կիրառման կարգի» համաձայն,
- ընդունված ծախսերի դրույքաչափերը, այդ թվում՝ ամփոփ նախահաշվի (վերադիր ծախսերի, շահույթի և այլ ծախսերի տոկոսները կամ չափերը),
- բացատրագրում բացառել նախահաշիվ կազմողի իրավասությունից դուրս նշված պայմանները՝ ապամոնտաժված պիտանի նյութերի հանձման կարգը, ինֆորմացիոն տեղեկագրում բացակայող նյութերի արժեքի վերաբերյալ և վճարումների կարգերը:

Այդ պայմանները պետք է որոշի պատվիրատուն կապալառուի հետ (պայմանագրով):

2. Ամփոփ նախահաշիվ

- Ամփոփ նախահաշիվը կազմված է անհասկանալի ձևով, ինչպես բանաձևը, այնպես էլ հաշվարկները: Ներկայացված ամփոփ նախահաշվում «Ժամանակավոր

շենքերի և շինությունների» և այլ ծախսերը հաշվարկված են աճողական հաշվարկով, որն անընդունելի է:

- Ամփոփ նախահաշիվներն ունեն համապատասխան գլուխներ իրենց անվանումներով (1984թ. նախահաշիվների կազման մեթոդով): Շինարարական օբյեկտների արժեքները (նախապատրաստական աշխատանքներ, հիմնական և օժանդակ օբյեկտներ, ինժեներական ցանցեր) ներառվում են 1-7 գլուխներում: «Ժամանակավոր շենքերի և շինությունների կառուցման համար անհրաժեշտ ծախսերի չափը հաշվարկվում է 1-7 գլուխներից՝ 3, 4 սյունակների ընդհանուր գումարից և ներառվում է 8-րդ գլխում, ինչը համարվում է շինարարի կողմից կատարվող շինմոնտաժային աշխատանքներ:

- Շինմոնտաժային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ այլ (հարակից՝ ուղղակի ծախսերով չհաշվարկված) ծախսերը հաշվարկվում են այդ գումարներից (1-8 գլուխներ, սյունակ 3-4) և ներառվում 9-րդ գլխում (կլիմայական պայմանների ազդեցություն, փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքներ, տարածքի մաքրում և այլն):

- Տեխնիկական և հեղինակային հսկողության ծախսերը՝ ըստ հաշվարկման Կարգի աղյուսակ 7-ի, պետք է հաշվարկել ընդհանուր արժեքից:

- Չնախատեսված ծախսերը պետք է ընդունել 6%-ի չափով (նույն Կարգի աղ.1 կետ 2. 2)ա):

3. Նախահաշիվ 1-1

- Նախահաշիվը կազմված է հիմք ընդունելով ԽՍՀՄ մշակույթի նախարարության կազմած հուշարձանային և հաստոցային (մոնումենտալնայա և ստանկավայա ժիվոպիս) նկարների վերականգման գնացուցակը և նորմերը՝ կիրառելով ՀՀ կառավարության 2024թ. հոկտեմբերի 17-ի №1656-Ն որոշմամբ հաստատված «Շինարարական աշխատանքների գնագոյացման նախահաշվային նորմերն ու դրանց կիրառման կարգը»:

- Հաշվի առնելով, որ նախահաշիվը մեկն է և այդ նախահաշվով որոշվում է կատարողի կողմից կատարման ենթակա աշխատանքների նախնական արժեքը, որի հետ պետք է համադրվեն մրցույթին ներկայացված արժեքները, անհրաժեշտ է լրացնել 8րդ և 9րդ գլուխներում հաշվարկված շինաշխատանքներին վերաբերող ծախսերը՝ ժամանակավոր շենքեր, կլիմայական պայմանների ազդեցություն, փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքներ, տարածքի մաքրում և այլն, «Կարգի» գլուխ 4-ով նախատեսված աղյուսակ 1-ի 50%-ը և արժեքի ավելացրած հարկը՝ 20%:

- Նյութերի միավորի գներն ընդունված են ներառյալ ԱԱՀ-ն՝ անհրաժեշտ է ճշտել և բացառել ԱԱՀ-ն:

Վերոնշյալ դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ներկայացված նախահաշվային փաստաթղթերում աշխատանքային կարգով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցու որմնանկարների ամրակայման և վերականգնման աշխատանքների ճշգրիտ ամփոփ նախահաշվային արժեքը կազմում է 25.700,1 հազ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն (4.283,35 հազար ՀՀ դրամ):


Եզրակացություն՝

Երաշխավորվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցու (պետ. ցուցիչ 9.35.14.1) որմնանկարների ամրակայման և վերականգնման նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Որմնանկարների ամրակայման և վերականգնման ամփոփ նախահաշվային արժեքը կազմում է 25.700,1 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն (4.283,35 հազար ՀՀ դրամ):

Փորձագիտական խմբի անդամներ՝ Մ.Դանիելյան (վերականգնող ճարտարապետ), Ն.Ա.Միխայիլով (բարձրագույն կատեգորիայի մոնումենտալ գեղանկարչության վերականգնող նկարիչ), Ս.Բաբայան (նախահաշվորդ):

Գլխավոր ինժեներ



Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ